

# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն ԹԻՎ 1

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԵՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

27 փետրվարի 2013թ.

ք. Կապան

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզային խորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի անդամներ, մարզպետարանի աշխատակազմի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների ղեկավարներ, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության կազմակերպությունների ղեկավարներ, զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օրակարգում՝

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին:

**/Ձեկուցող՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետ Ս. Խաչատրյան/**

2. Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքի և առկա խնդիրների մասին:

**/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Ս. Թանգյան/**

3. ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2013թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների մասին:

**/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թ. Ղազարյան/**

4. Տեղական ինքնակառավարման մարմինների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մոնիտորինգի գործառույթների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին

**/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Ն. Ավանեսյան/**

5. ՀՀ օրենսդրությունում կատարված փոփոխություններից և լրացումներից բխող տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված գործառույթների իրականացման մասին

**/Ձեկուցող՝ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կ. Կոզմանով/**

Մարզխորհրդի նիստը ներածական խոսքով բացեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի առաջին հարցի՝ «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2012թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

Օրակարգի երկրորդ՝ «Գարնան գյուղատնտեսական աշխատանքների նախապատրաստման ընթացքի և առկա խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Սամվել Թանգյանը:

Օրակարգի երրորդ՝ «ՀՀ Սյունիքի մարզի 2010-2013թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի 2012թ. տարեկան աշխատանքային պլանի կատարման և 2013թ. տարեկան աշխատանքային պլանով նախատեսված աշխատանքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի պետ Թադևոս Ղազարյանը:

Օրակարգի չորրորդ՝ «Տեղական ինքնակառավարման մարմինների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների մոնիտորինգի գործառույթների իրականացման ուղղությամբ կատարվող աշխատանքների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժնի պետ Նաիրա Ավանեսյանը:

Օրակարգի հինգերորդ՝ «ՀՀ օրենսդրությունում կատարված փոփոխություններից և լրացումներից բխող տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված գործառույթների իրականացման մասին» զեկուցումով հանդես եկավ ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ Կառլեն Կոզմանովը:

Զեկուցումների շուրջ ելույթներով հանդես եկան Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետ Արշակ Ուստաբաշյանը, առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ Աշոտ Ծատրյանը, Քաջարան քաղաքային համայնքի ղեկավար Վարդան Գևորգյանը, Տեղ գյուղական համայնքի ղեկավար Սաղաթել Գալստյանը /կցվում են զեկուցումները և ելույթները/:

Մարզխորհրդի նիստում հանդես եկավ Սյունիքի մարզի դատախազ Նորիկ Հակոբյանը:

Մարզխորհրդի նիստի աշխատանքներն ամփոփեց ՀՀ Սյունիքի մարզպետ Սուրիկ Խաչատրյանը:

**ՀՀ Սյունիքի մարզպետ**

  
**Ս. Խաչատրյան**